ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԴՐԱՄ

ՂՐԿԵԼՈՒ ՀԱՍՑԷ

M. BENIARD
Poste Restante
Athnes (Grèce)

Ամէն բան ժողովրդի միջոցով, ժողովրդի կամքով և ժողովրդի համար

Իւրաքանչիւրի և ընդհանուրի հաւասարապէս բարեկեցիկ կեանք — դա է ճշմարիտ ազատութիւն։



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՄԵՆ ՏԵՂԵՐԻ ՀԱՄԱՐ

ՏԱՐԵԿԱՆ· · · · · · 5 Ֆրանկ
ԿԷՍ ՏԱՐԻԱՆ· · · · 3 „
ՄԻ ՀԱՄԱՐԸ· · · · ½ „

Ժողովո՛ւրդ, դու ինքդ միայն կարող ես ձեռք բերել քո ազատութիւնը։

Արեան ճահիճներ — ահա՛ ազատութեան ճանապարհը։

Ժողովո՛ւրդ, մի աղերսիր, այլ պահանջիր և ձեռք բեր։

ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ | ԱԹԷՆՔ | Nr 5 ՅՈՒԼԻՍ Nr 5 | 1894 | ՄԻԱՄՍԵԱՅ

ՀԱՅ ԳԻՒՂԱՑՈՒ ՕՐԸ

ԳԻՒՂԱՑՈՒ ՀԱՌԱՋԱՆՔԸ.—"ՈՍԿԷ ԱՐՏԷՆ ՈՒ ԻՄ ԿԱԼԷՆ ԱԼ ԻՆՉ ՄՆԱՑ ԻՆՁԻ„....

ԱՊՍՏԱՄԲԵԼՈՒ ԻՐԱՒՈՒՆՔԸ

Իւ մեզ ասել են միշտ, երբ ապտակ տան քո մէկ այտիդ, դու միւս այտդ էլ դիր ապտակի տակ։ Դա, անշուշտ, մեծ վեհանձնութիւն է, որով ուզում են ամաչացնել ապտակ զարնողին. բայց, համոզվեցէք, որ ապտակ զարնողներն այդ վեհանձնութեան առհասարակ վեհանձնութեամբ չեն պատասխանում։ Մէկ այտին տըված ապտակին յաջորդում է ապտակը միւս այտի վրայ։ Այդպէս չէ՞ն անում աղդեօք ժողովրդի հետ այն բոլոր մարդիկը, որ կոչվում են բռնաւորներ, հրամայող, մեծ, ունեւոր, կառավարող, բարձրաստիճան և այլն, մի խօսքով, այն բոլոր մարդակերպ արարածները, որոնց իշխանութեան լուծը կրում է և համբերում ժողովուրդը։

Տեսնելով վերոյիշած պատուիրանքի անգործնականութիւնն իրականութեան մէջ, սփխտանեբըն ամեն ժամանակ ջանացել են այլ և այլ մեկնութիւններ տալ նրան, այդ պատուիրանքին։ Բայց, ի հարկէ, իրանց բառախաղութիւններով նրանք երբէք ոչ ոքին չեն կարողացել համոզել։ Եւ դա բնական է։ Բնական է, որովհետեւ դիմադրելու զգացումը ստացվում է բնականից և բնածին յատկութիւնն է ինչպէս ամենափոքր ճճիի, նոյնպէս ամենազօրաւոր գազանի, ինչպէս հազիւ նոր ծնած մանկան, նոյնպէս չափահաս մարդու։

Բայց ոչ նրանք, նիւթապէս զօրաւորները, կառավարողները, որոնց շահն է այդպէս պահանջում, միշտ ջանք են անում շատերին, ընդհանրութեանը, ժողովրդին, եթէ ոչ համոզել, գէթ դնել այնպիսի կենսական պայմաններում, որ նա, ժողովուրդը, չը կարողանայ գործադրել իր դիմադրելու բնական զգացման պահանջը։ Եւ այդ նպատակի համար նրանք օգտվում են միշտ իրանց նիւթական մեծ զօրութիւնից և դրան, այդ զօրութեան, նպաստող տնտեսական կարգերից։ Այդպիսով նրանք աջողում են ընդհանրութեանը կրթել այդ ոգով, զսպել նրան, ինչպէս մարդը կրթում ու զսպում է վայրի գազաններին և այլ ամեն տեսակ կենդանիներին։ Բայց որովհետեւ մարդը բանականութիւն ունի, այդ պատճառով զանազան ոճերով նրանք միշտ երգել են ժողովրդին այս յայտնի երգը. — „Պատուիրանք. երբ ապտակ տան՝ քո մէկ այտիդ, դու միւս այտդ էլ դիր ապտակի տակ“։

Կրթե՞լ, զսպե՞լ․․ Այո՛, բայց ժամանակաւորապէս։

Եթէ մարդկային աշխատաւոր ընդհանրութեան, ժողովրդին միշտ զօրաւորները ջանացել են այդ կ ր թ վ ա ծ վիճակում պահել, և այդ էլ կենսական նիւթական պայմանների շնորհով, դա դեռ բաւական չէ ջնջելու համար մարդու միջից դիմադրելու բնածին յատկութիւնը։ Պատմական այլ և այլ շրջաններում հասնում է ժամանակ, երբ կենսական նիւթական պայմանները այլ եւս չափազանց ճնշող են թւում ընդհանրութեան։ Ահա այդ րոպէին դիմադրութեան զգացումն արթնանում և յուզվում է նրա մէջ։ Նա ուզում է փոխել իր կեանքի այլ եւս անտանելի նիւթական պայմանները։ Այդ գործն, այսինքն իր կեանքի այդ յեղափոխութիւնն անելու համար իր առաջին հարուածները նա ուղղում է իրան ճնշողների, զօրաւորների ու տէրերի դէմ։ Նա ապստամբում է։ Նա ապստամբում է իր բնածին յատկութեան դրդումով, որ դիմադրութիւն է յանուն գոյութեան, որ ինքնապաշտպանութեան զգացումն է։ Նա ապստամբում է, և դրանով ապացուցանում, որ իր մէջ ծագել են նոր [illegible] պահանջներ։ Այդ երկու տեսակէ[illegible] իր գոյութեան՝ իր դիմադրելու բնածին յատկութեամբ և կենսական նոր պահանջների զօրութեամբ, — նրա համար դառնում է բնական և մինչեւ իսկ սուրբ ապստամբելու իրաւունքը։

Իւ ահա ինչու ամեն ժամանակ, ամեն կառավարութիւն, ամեն կառավարողներ ու վարիչ դասակարգեր կստաղութեան ու երկիւղի մէջ են ընկնում, երբ ժողովուրդն ապստամբում է։ Նրանք լաւ են հասկանում, որ կեանքի ծանր պայմանների և ծագած նոր պահանջների ազդեցութեան տակ է, որ ժողովուրդն ապստամբում է և որ հէնց այդ պատճառով ժողովրդի ինքնապաշտպանութեան բնական զգացումը՝ դիմադրութիւնը, ստանում է իր՝ նոյնքան բնական՝ յուզված կերպարանքը — ապստամբութիւնը եւ ձեռք բերում ապստամբելու՝ դարձեալ նոյնքան բնական՝ իրաւունքը։

Բնակա՞ն․․․ այո, և, ուրեմն, անխուսափելի, ճակատագրական երեւոյթ է դա մարդու մէջ, որ ամեն կերպ ձգտում է հասնել իր նպատակին և որին այդ ժամանակ չեն կարող զսպել ոչ միայն երկու ապտակ իրար ետեւից ստանալու պատուիրանքը, այլ և զօրագնդեր, զէնքեր, թնդանօթներ, կռուարաններ կախաղաններ․․․․․

Բանը նրանումն է, որ մարդկանց բնութեան տրամաբանութիւնը (logique) միշտ համապատասխան է իրերի ընթացքի տրամաբանութեան, և այդ երկուսը միասին ստեղծում են մի կողմից պատմութեան և միւս կողմից առաջադիմութեան տրամաբանութիւնը։ Այդ պատճառով է, որ ժողովրդները միշտ ապստամբում են բուն իսկ ժամանակին, և դրա համար է, որ նրանք ապստամբելու իրաւունք ունեն, և որ այդ իրաւունքը որքան բնական է, նոյնքան էլ սուրբ է։

Կառավարիչները երբէք չեն ուզում, որ այդպէս լինի․․․․ բայց ո՞վ է նայում նրանց կամքին․․․ Ո՛չ իրերի ընթացքը և ո՛չ էլ — դրա շնորհով — ժողովուրդը․․․ Ապստամբ ժողովուրդը բացում է իր կուրծքը թշնամու առջեւ եւ լսրում [illegible] յաղթանակի նետը․․․



ԱՍԹԱՒՆԵՐԸ

Իւ նախանձեցին — ինչո՞ւ այլք քաջ են,

ՇԻՐԻՆ ԱԼԻ

ԵՒ ԻՐ ՍՊԱՆՈՂԸ *)

Յեղափոխական կեանքից.

Գիւղի մէջ նա առաջին երիտասարդն էր, որ շատ անգամ յանդգնել էր մերժել աւազակների ծանր պահանջները։ Նա մի ժամանակ ոստիկան զինուոր էր գրվել Ջանիկի սանջակում. հիմա թողնելով այդ անպատիւ պաշտօնը, աշխատում էր երկրագործութեամբ։

Նա լաւ ճանաչում էր Թաթոսին. սրա խոնարհ բնաւորութիւնը, քաղցր խօսքերը և դէպի գիւղացիներն ունեցած սէրն այն աստիճան էին գրաւել Մինասի սիրտը, որ նա հիանում էր, իր բոլոր հոգով սիրում, պաշտում էր վարժապետին։ Նրանք շատ անգամ առանձնանում՝ էին մի ապառաժի կամ ծառերի ստուերի տակ. Թաթոսը խօսում էր ոգեւորված կերպով. նրա խօսակցութեան գլխաւոր նիւթը լինում էր գիւղացին և նրա դրութիւնը։

— Մենք պէտք է ազատվենք, Մինաս — ասում էր նա մէկ օր, — այս անտանելի դրութիւնից։ Մեր տնային ներքին կեանքը քանդվել է. մեզ համար և առհասարակ Թիւրքիայի գիւղական ժողովրդի համար սպառնում է անկում։ Այդ անկումն արդէն կամաց-կամաց զգացվում է. այժմ մենք ընդհանրապէս խորհում ենք միայն մեր ներկայ վիճակի վրայ, սակայն մենք ունենք և զաւակներ, որոնք պէտք է կազմեն ապագայ սերունդը. մենք մեր անտարբերութեամբ ուրիշ բան չենք կարող կտակել նրանց, եթէ ոչ ծայրայեղ թշուառութիւն, որի մէջ խրված ենք մենք ինքներս այսօր։ Մեր մէջ չը կայ բարոյական տոկունութիւն. բռնութիւնը դարերի ընթացքում մեր մէջ մտցրել է անասնային հպատակութիւն և ստորաքարշ ստրկութիւն. մենք կորցրել ենք և մեր մարդկային պատիւը. անբարոյականութիւնն ազատ համարձակ մտնում է մեր սեմից, անպատւում է մեր ընտանեկան յարկը, իսկ մենք լուռ ու մունջ՝ քարէ արձանների պէս դիտում ենք նրան և ոչինչ էլ չենք զգում։ Պէտք է փրկել մեր պատիւը, պէտք է փրկել մեր ընտանեկան յարկը, պէտք է ամրքել մեր տնտեսական ու կենսական ցաւերը, պէտք է փրկել և ապագայ սերունդը։ Այս մեծ փրկագործութիւնը պահանջում է եւ մեծ զոհողութիւն։ Մեր արիւնը միայն պէտք է մաքրէ մեր անցեալի կեղտը և այդ արեան ճանապարհով մենք պէտք է հասնենք մեր նպատակին․․․․

Մինասը լուռ ականջ էր դնում, դիտում էր նրա նուաղ աչքերը, լափում նրա ամեն-մի խօսքը․․․

Այսօր տեսնելով կապետին և Թաթոսին միասին, նա մօտեցաւ նրանց մէկ ինչ-որ աւետիս տալու. նրա դէմքի վրայ փայլում էր վերին աստիճանի ուրախութիւն և վրէժխնդրութեան հաճոյք։

— Գիտէ՞ք ինչ է եղել, ասաց Մինասը. Շիրին-Ալին սպանել է Զավուշին. ձիաւորներն արդէն հետեւակների հետ հալածում են նրան։ Իւզ-Բաշի չէրքէզ Մուսան զէնք է ուղարկել գիւղացիներին, որ իրանք էլ հալածեն աւազակին։ Ես արդէն վերցրել եմ՝ այդ զէնքերից մէկը. միւսները վերցրել են մի քանի երիտասարդներ, մէկ հատը միայն պարապ է մնացել․․․․ Մեզ հետ պէտք է միանայ Մօլլա-Հասանն իր մարդիկներով։

— Մնացած զէնքն էլ ինձ համար կը վերցնէք, ասաց կապետը, իր խորհրդածութիւններից ուշքի գալով և ուրախութեամբ վեր թռչելով։ Մինչեւ որ Թիւրք հէքիմէթի քթին չի խփեն, նա չի ուզենալ զարթնել իր քնից, աւելացրեց նա. — ահա ամբողջ ինն ամիս է, որ այդ չարագործը գիւղացիների գլխին ղալմաղալ է հանում, բայց հէքիմէթը իր տեղիցն էլ չէր շարժվում. հէնց որ նա սպանեց չաւուշին, սրա միտքն է ընկել թէ լեռը էշգըլյա (աւազակ) կայ․․․ — Բայց ինչ էլ լինի, նախ պէտք է ջնջել այդ պստիկ բռնապետին — վրայ բերաւ Թաթոսը, — որպէս զի յետոյ մեզ համար գործ բացվէ մեծ բռնապետների դէմ․․․

***

Զորշամբայից դէպի հարաւ, չորս ժամ հե-

*) Տես „Ապտակ“ Nrs. 3 և 4

Յեղափոխական սուրբ կռի մէջ են . . .
Եւ իրենց երդին արժանի ոճով
Անձնուէրների դէմ կռկռացին խմբով . . .
Ազնուագոյն թռչունք ակռաւոները չէ՞ն,
Ինչո՞ւ արծիւներն առաջինք կոչուեն.
„Ցուէք անոնց դիեր“ — գիշաձայն գոչեն . . .
Արդէն յայտնի է, որ ակռաւոներուն
Պէտք են դիակներ, և միս, և արիւն։

Հայ քաջեր անլուր տանջանքներ կը կրեն,
Բանտի խորերը թշուառ կը մեռնեն,
Միշտ հերոսաբար կը կռւին, կիյնան,
Ազատ կոչերով կելնեն կախաղան,
Բայց նախանձի և փոռամոլութեան
Դեւը կը դաւէ սրտին մէջ ներքին՝
Ազգասէր կոչուած՝ թշնամիներին։
Արդէն յայտնի է — այդ ակռաւոներուն
Պէտք են դիակներ, և միս, և արիւն։

Կռուի դաշտի մէջ հերոսներն ընկած,
Իրենց վերջին շունչ հազիւ արձակած,
Խօսքն Ազատութեան դեռ բերաններին
Եւ կողերի մէջ դեռ թիւրքի սրին, —
Ազգասէրները ինքնակոչ՝ կրկին
Նահատակները միշտ կը զրպարտեն,
Անոնց վեհ ճակատ ցեխով կը մրոտեն։
Արդէն յայտնի է — այդ ակռաւոներուն
Պէտք են դիակներ, և միս, և արիւն։

Դրօշն Ազատութեան, պատիւն Հայրենեաց,
Ժողովրդեան սուրբ իրաւունքն ու հաց՝
Իրենց արեան գնով ջերմ պաշտպանները
Կը հռչակուին վատ — ա՜հ, այն սուրբերը,
Իսկ գործն ու փոքը, աշխարհն, ամեն բան
Ջեղուխներինն է այն ամբարտաւան,
Այն ասպետներին կրքի, ստորութեան . . ։
Արդէն յայտնի է — այդ ակռաւոներուն
Պէտք են դիակներ, և միս, և արիւն։

Այո՛, ագռնցն է արիւն, միս ու դին —
Իրենց գոյութեան իբր պայման ու գին.
Ագռնցն է խնջոյքն մսոդակերութեան,
Որ կսկռոցների տակ ցած խնդութեան,
Արիւնածարաւ, ագահ, շատակեր,
Հեռուէն կը դիտեն — երբ ընկնին քաջեր՝
Խրախճանքով պատռեն անոնց աղիքներ։
Ա՜հ, այդ է մեր կեանք — միշտ ակռաւոներուն
Պէտք են դիակներ, և միս, և արիւն . . . ։

24 Յուլիսի 1894. ԽՆԹԸ.

ԻՍ ԿԱՐԻՔ Է

Հասարակական-Նիւթական թշուառութիւնն ապստամբութեան խորհրդատուն է։

*

Ներկայի կեանքը առասպելական Եանուսի պէս երկերեսանի է. մի երեսով ներկայացնում է մեծերի եւ ունեւորների փարթամութիւնն ու լիութիւնը, միւս երեսով՝ աշխատաւորների եւ չունեւորների թշուառութիւնն ու ստրկութիւնը։ Մարդկութեան մեծամասնութեան թշուառութիւնն ամէն ժամանակ եղել է պայման փոքրամասնութեան լիութեան։ Սոցիալիզմն այն պատմական գործիքն է, որ կեանքը, այդ երկերեսանի Եանուսին, կը դարձնէ մէկերեսանի — հաւասարապէս ժպտուն ու բարի ամբողջ մարդկութեան համար։

*

Թշուառի հեծեծանքն ու աղաղակն ըղձացած ու սպասած նախերգանքն է յեղափոխութեան։

*

Տակառը եւ կամ պարկը նրանով են տարբերվում պարարտ հարստի փորից, որ աւելի ձեւաւոր են իրանց տեսքով եւ աւելի մաքուր իրանց պարունակութեամբ։

*

Սովորական խօսք է, թէ մարդկանց գործերի դատաւորը պատմութիւնն է. բայց աւելի ճիշտ կը լինէր, եթէ ասէին, թէ այդ դատաւորն ազատութիւնն է, որովհետև ազատութեան թագաւորութեան մէջը միայն պատմութիւնը կարող է լինել դատաւոր։

*

Ինչո՞ւ համար է, որ սուլթանական միապետական նշանը կիսատ լուսին է։ Որովհետև այդ միապետութիւնը կիսատ լուսնի պէս կոտրված է։

*

Թշուառն իր ստրկութիւնը ու ցաւերը գինու մէջն է խեղդում, իսկ բռնաւորն իր մեծութիւնն ու իշխանութիւնը թշուառի արեան մէջ է գտնում։ Տարբերութիւն չը կայ — երկու ըմպելիներն էլ հարբեցնում են։

*

Կառավարողներն առհասարակ ունեն մի բնաորոշ յատկութիւն — երբէք չը գիտեն կառավարել, մի բան, որ ապացոյց է, թէ մարդն մարդուն չէ, որ պէտք է կառավարէ, այլ թէ բոլոր մարդիկ միահամուռ ոյժերով ու գիտութեան պաշարներով պէտք է կառավարեն իրերը՝ իրանց, այն է բոլոր մարդկանց, ընդհանուր բարօրութեան պահանջների համեմատ։

*

Տգէտի գիտութիւնը սկսում է այն կէտից, որտեղ վերջանում է։

Ազատասէր ինքնուրոյնութեան ձգտումների առարկան, այլ [illegible] — քներն են։

ԴԷՍ ՈՒ ԴԷՆ

Մի ժողովում պ. Շերազն ասել է թէ „Հընչակեանները [illegible] ա ն կ ե ն - ն ա ն կ ե ն“, թէ ինքը „Յարալիզմը չէ գնահատում“։ Դա մեզ յիշեցնում է այն կոյրին, որը կարծում է թէ լոյսը կարող է անսնել։ Տգիտութիւնը գիտութեան երբէք գնահատող չէ կարող լինել։

***

Ազգը, կատաղած իր անպիտանութիւններից, մի նոր հնարք է գտել յեղափոխականներ որսալու համար։ Իր լրտեսներին անօթի է պահում այնքան ժամանակ, մինչեւ որ նրանք յեղափոխականներ ձերբակալել տան. այդ պատճառով, սուլթանի մայրաքաղաքի շների պէս, լրտեսները թափառում են փողոցներում եւ անօթութիւնից կատաղած՝ յարձակվում ամենամեկ անցորդ հայի վրայ, եւ Կ. Պոլսի բանտերում էլ տեղ չը կայ . . . բայց չէ՞ որ արդէն ինքը հպարտ Բիւզանդիոնը մի մեծ բանտ է . . . .

***

Արմաշի նախկին մենաւոր եւ չորս տարուայ ընթացքում հայոց վրայ շէյխութիւն արած Խորէնն այժմ ստէպ մտածում է աշխարհի ունայնութեան վրայ եւ քիչ փոփոխելով յայտնի պատմական բացականչութիւնները, սրտի խորքից գուրս է հանում այս աղաղակն „Աւա՜ղ փառաց յանցաւորի“։ Մի խոր հառաչն է միայն, որ թեթեւ կերպով մխիթարում է նրան այդպիսի ծանր բոպէներին։ Եւ ահա յանցաւորի անցեալ փառքերը երեւան են գալիս իր աչքին. պատրիարքութիւնն, լիառատ կեանք, փարթամութիւն, սպասաւորներ, ազգից կորզած

աւորութեան վրայ, Եշիլ-Ըրմաքի արեւմտեան եզերքի ցից զառիվերում, իր այս ու այն կողմ ցրած ցանցառ աներով, բարձրանում է Գափուգաեա գիւղը։ Բնութիւնը նրան շրջապատել է բնական, անմատչելի պարսպով. ապառաժների մի երկար շարք, գետի ափից սկսելով, բարձրանում է և կիսաշրջանակ կազմելով, մէկ անչնան գագաւոր, անտառուտ հովտում փակում է գիւղը։ Գետն իր խորութեամբ կատարում է հին բերդի խրամատի պաշտօնը։ Հարաւային կողմից մի խորը ձոր զատում է նրան Թէքվուրի գիւղերից։ Գիւղի գիրքը երթալով բարձրանում է դէպի արեւմուտք և հասնելով ահագին բարձրութեան, ներկայացնում է մի վիթխարի, հրէշային կմախք, որի կողերի սրածայր ոսկորները դուրս են ցցվում կոնաձեւ բլրակի գագաթից։ Նրա վրայ մագլցելով բարձրացել են կաղնիի հսկայ դարաւոր ծառեր և իրանց արմատներով ճանկելով կողի ոսկորների բացվածները, կազմել են անթափանցելի անտառ։ Միակ անցքը, որ տալիս է նա ճամբորդներին, կազմում է մի շատ նեղ կիրճ, որը երթալով անզգալի կերպով սեղմվում է և առնում մի կոշտ ու կոպիտ կերպով շինված դրան սեմերի ձեւ։ Այդ նեղ անցքի առնունով գիւղը կոչվում է Գափուգաեա։

Աշնան քամիները փչում էին։ Անընդհատ շվալով, նրանք զարնում էին Ջանիկի անտառների հսկայ ծառերին եւ նրանցից խլելով իրանց դալարագեղ զարդը, անկանոն կերպով սփռում էին չորս կողմ։ Քէսթէնէ-Կէռիշին հարաւային

խոր ձորից բարձրանում էր մի զինված խումբ, բաղկացած հինգ հոգուց, բոլորն էլ հագած լազի զգեստ, որ տալիս էր նրանց մի վայելուչ ձև։ Իրանց բաշլըղների մետաքսապատ ծայրերն ապտ ընկել էին կարտուշներով (փամփուշտ) ծածկված ուսերի վրայ եւ նրանց քայլերի արագութեան համապատասխան էլ եւ էջ էին անում։ Նրանք ունէին ռուսական բերդան հրացաններ. աջ ձեռքով բռնած ունէին նրա բլդակի տակից, իսկ ձախ ձեռքով նրա փողից եւ բերանը հորիզոնական ձեւով ուղղել էին դէպի առաջ։ Նրանք շտապում էին, անհամբեր դէմքով ու անձայն։ Վայրի կաչաղակները (սագսաղանները) նրանց քայլերի խշրտուկից վախեցած՝ „կռա-կռա“ ձայներով այս ու այն կողմ էին թռչկոտում։ Շիրին-Ալին ամենայն զգուշութեամբ առաջնորդում էր իր խմբին։ Նրանք գնում էին գագաթ եւ արդէն մտեցել էին բլրի ցից գագաթին, երբ խորհրդաւոր մի շվոց իսկոյն գամեց նրանց իրանց տեղը։ Ցասներկու հրացանների փողերից միանգամից դուրս թռան գընդակները եւ վիժալով անցան խմբի գլխի վրայով, ոչ մէկին չը խփելով։ Աւազակներն իսկոյն նախատեսելով այդ բանը, արդէն փռվել էին գետնի վրայ եւ գլորվելով, իւրաքանչիւրն իրան համար գտել էր վայրկենական պատսպարան։ Այսպէս անցան րոպէներ, բայց ոչ ոք չէր երեւում։ Հրացանների աղմկալից արձագանքը դեռ հազիւ էր սպառնական կերպով լռել լեռների ապառաժուտ կողերում, երբ Շիրին-Ալին

մրթմրթաց զսպված կատաղութեամբ։

— Գնեավուրն է անպատճառ. հէնց այսօր պէտք է նրա հետ վերջացնենք մեր հաշիւը. . . Ես այլ ևս դուրս է եկել իր շապկից։ Տեսնենք թէ ինչպէս կը լինի Շիրին-Ալիի անցքը կտրել համարձակողի վախճանը։ Խիստ ցածր ձայնով նա հրամայում էր, որ գամված մնան գետնին։ Գիւղի անցքի հարաւային եզերքում, ժայռերի գլխին բարձրացած տան ծակերից Մոլլա-Հասանն իր վեց ընկերներով դիտում էր աւազակների շարժումը, նրանց դիրքը, բայց մացառները արգելում էին նրան։ Նրա ընկերներից մի թիւրք պնդում էր, թէ նրանք մեռած էին եւ փոքրիկ պատուհանից հազիւ գուրս էր հանել իր ճակատը, երբ յանկարծ բէրդանի գնդակը տեղն ու տեղը գբլորեց նրան։

Աւազակների դիրքն այնքան նպաստաւոր չէր իրանց համար։ Հերոսական ճարպիկ շարժվածքները, որ յատուկ է հետիոտն անտառի աւազակին, առժամանակ ծածկել էր նրանց իրանց հակառակորդների աչքից։ Մինասը, որ ամրացել էր ժայռերի ծոցում, թզուկ մացառների միջից նկատեց մի բաշլըխի ծայր եւ երեւակայելով թէ ինչ ուղղութեամբ կարող էր կենալ նրա կրողը, քաշեց բլդակը։ Ցանկարծ լսվեցաւ մի հսկայի ահռելի մռնչիւնը և „ա՜խ, գեավո՜ւրս“ դառն հոգոցի աղաղակի հետ վերջացաւ Շիրին-Ալիի կեանքը . . .

(Կը շարունակվի) ԱԽԹԱՐ — ՌԱՄԻԿ



ՍՈՒԼԹԱՆԱՆԻՍՏ ՔԱՂԱՔՈՒՄ ՍՈՒԼԹԱՆԱԿԱՆ ՔԱՂՑԱԾ ԼՐՏԵՍՆԵՐՆ
ՈՒ ՈՍՏԻԿԱՆՆԵՐԸ ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐ ԵՆ ՈՐՍՈՒՄ...

դրամներ, հայրախնամ սուլթանից ստացած դըրամական մեծամեծ „բաշխիշներ“ ... եւ յետոյ միւս կողմից մէկ ամբողջ ժողովուրդ, որին պատրիարքն իր վատութեամբ ու դաւաճանութեամբ դնում էր միշտ սուլթանի ոտքի տակ, օգնում մեր այդ ածիւնարբու թշնամուն իր մենամարտութեան մէջ յեղափոխականներիս դէմ, կոնդակներով մատնում շատ յեղափոխական գործիչներին՝ նշանակելով դրանց անունները, մասնակցում սուլթանական մարդակեր խրախճանքներին, որոնց միջոցին հայ յեղափոխականներին էին կախաղան հանում եւ սպանում հայ ապստամբներին, որ արդարութիւն էին պահանջում, կտտրում նաև հայ գիւղացի ժողովրդին, որ սովատանջ այսօր թափառում է երկրից — երկիր .... Եւ այլ շատ բաներ, որոնց մէջ խորէնն արած ունի այնքան սխրագործութիւններ, կամաց-կամաց երևում են նրա աչքերի յանդիման եւ նա չէ կարողանում զսպել իր հառաչն ու բացականչում է՝ „աւա՜ղ փառացս յանցաւորի“. .. Եւ դաւաճանի ճակատի վրայ սեւ կնիքով նկարւում է հայ ժողովրդի արիւնը, որ ժայթքել է նրա վրայ եւ դա — իր հայրադրով վեհապետի զէնքի շնորհով, որ դաւաճանն ինքը միշտ սրում էր . . .

***

Այժմ օրւան հերոսներն են այն չորս հայերը, որոնք Շ. Գարահիսարում բանտից ազատվելու փորձ արած ժամանակ դիւցազնաբար ընկան թշնամու հարուածներից, կանխապէս մի քանիսը սպանելով թշնամիներից։ Չորսն էլ բանւոր էին, տանջված ու հարստահարված դասակարգի զաւակներ, որ իրանց պատմական դատի համար անձնազոհ եղան։ Եւ որքան են աշխատաւոր ընդհանրութիւնից մինչև այժմ եղած այդպիսի անմահ մարտնչողները, որոնք իրանց ոսկորներն են դնում իբրև հիմք հայ ժողովրդի ազատութեան։ Մեր ունեւոր դասակարգը եւ մեր կրթված շրջաններն արդեօք որքան հոգի կարող են համրել իրանցից՝ ընկած փառաւոր կռւում ... Անպիտաններ, նրանք չեն դադարում սակայն շահագործել մինչև իսկ հերոսների անշունչ դիակները, դրանց շինելով պատւանդան իրանց փառքի ...

ՈՒՐԻՇՆԵՐԻ ՄՏՔԵՐ

Երբ մկրատներն ու կկոցը կը գործեն միանակ, ստրուկների այլ ևս պէտք չի՛ լինիլ։

Արիստոտէլ.

*

Ես գերին եմ իմ խօսքի, բայց ունեմ ազատ խօսք։

X.

*

Մէկ աղքատ մարդու ես հարցրի, թէ ի՞նչպէս է ապրում, նա պատասխանեց. — „Ոռպէս սապոն, միշտ հալվելով“։

Սուիֆտ.

*

Հարուստը մի ճշմարիտ օտարակեր է, որ ապրում է նրանց աշխատանքով, որոնք ոչինչ սեփականութիւն չունեն։

Սուստէր Լաուման.

*

Մեծ յանցանքները հետեւանք են թշուառութեան և կարիքի։

Ֆրանկլին.

*

Ստասէրները կրակ կը ձըգեն ուրիշի տանը, թէկուզ իրանց հաւկիթները եփելու համար։

Բէկօն.

*

Ամենափոքր կաթիլ ջուրը միացած Օվկէանոսի հետ՝ չէ ցամաքում։

Սաւկիա-Պանդիտա.

*

Դիւանագիտութիւնը մէկ արուեստ է, որով ասում էք մի բան, երբ ոչինչ չունէք ասելու, և նոյնպէս արուեստ է ոչինչ չասելու, երբ դուք ունէք ասելու ոչ և է բան։

X.

*

Թող զարկեն որքան կուզեն, դա կը լինի զուր աշխատանք, և մենք կասենք սօցիալիզմի մասին. — „Իմացէք, որ դա մի զնդան է, որը դեռ շատ մուրճեր կը մաշէ։“

Լուի Բլան.

*

Ո՞վ կը համարձակվէ այսուհետև փորձել կուելու յեղափոխութեան հետ, քանի որ Նապօլէօնի կողերը նրանով են ջարդվել։

Ա. Մարաս.

ԱԹԷՆՔ· «ՀՆՉԱԿԻ» ՏՊԱՐԱՆ·

„ԱՊՏԱԿ“
ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

„ԱՊՏԱԿ“ը հրատարակելով, մենք ուզում ենք հայ յեղափոխական գործող մարմնին տալ մի նոր զէնք — երգիծաբանի ապտակը։ Այդ ապտակը՝ թաթախված հայ քաջերի արիւնով՝ պէտք է հարուածէ այն ամենքին, թէ արտաքին և թէ ներքին թշնամիներին, որոնք թշնամի կամ հակառակորդ յայտնվելով յեղափոխութեան, թշնամի և հակառակ են յայտնվում նաեւ հայ ժողովրդային բազմութեան, աշխատաւորի, գեղջուկի եւ բանւորի շահերին։

„ԱՊՏԱԿ“ը պէտք է ղեկավարվէ այն վսեմ գաղափարներով, որոնք ժամանակիս ամենաառաջադէմ գաղափարներն են հանդիսանում հանրամարդկային առաջադիմութեան մէջ, գաղափարներ, որոնք արդէն փայլուն կերպով յայտարարված են հայ յեղափոխական ասպարէզում եւ հայ յեղափոխականի գործերով ու արիւնով արձանագրված են Հնչակեան դրօշակի վրայ։

„ԱՊՏԱԿ“ի լեզուն կը լինի միշտ անկեղծ, համարձակ, շիտակ, համոզված եւ խիստ։ Իր հարուածի տակ նա կը դնէ ամեն հասարակական հիմնարկութիւն եւ հասարակական անձեր, որ հայ յեղափոխական առողջ գաղափարին և ժողովրդի շահերին վնասակար են։

„ԱՊՏԱԿ“ի բոլոր համարներում միշտ կը զետեղվեն նկարներ քաղաքական պարունակութեամբ։